ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14-15-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

11 փետրվարի 2016թ. ք. Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ա. Լոպոյան
Հ. Իգիթյան
Հ. Բաբայան
Հրավիրված Բ. Ղալոյան
Խ. Զարգարյան
Ա. Ազարյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.«Ուլիս» ֆուտբոլային ակումբի նախագահ Գ. Կազանչյանի 02/02/2016թ. գրության և ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ Ա. Ազարյանի ծառայողական գրության քննարկումը /զեկուցող Ա. Լոպոյան/

1. «Ուլիս» ֆուտբոլային ակումբի նախագահ Գ. Կազանչյանի 02/02/2016թ. գրության և ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ Ա. Ազարյանի ծառայողական գրության քննարկումը

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «Ուլիս» ֆուտբոլային ակումբի «Ուլիս» և «Ուլիս-2» թիմերը հանել առաջնություններից, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Ուլիս» և «Ուլիս-2» թիմերին մնացած խաղերում գրանցել տեխնիկական պարտություն, «Ուլիս» ֆուտբոլային ակումբին տուգանել 500000 դրամ:

2. Հիմք ընդունելով Արտոնագրման բաժնի հաշվետվությունը և ակումբի թերացումները արտոնագրման ֆինանսական և ոչ ֆինանսական պահանջների կտրվածքով հետ կանչել արտոնագրերը, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ «Ուլիս» ֆուտբոլային ակումբին տուգանել 600000 դրամ:

Ընդամենը 1100000 դրամ:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ